

Կ-751-03.04.2015-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈԴՎԱԾ 1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-287-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) **3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «ցուցամատների մատնադրոշմներ, սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ աջ և ձախ ձեռքերի որևէ մատի մատնադրոշմներ» բառերը փոխարինել «բոլոր մատների մատնադրոշմներ» բառերով:**

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 4-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2. Մինչև 6 տարեկան քաղաքացիներին անձնագիրը տրամադրվում է 3 տարի վավերականության ժամկետով, 6 տարեկանից մինչև 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 5 տարի վավերականության ժամկետով, բայց ոչ ավել, քան 16 տարին լրանալը, իսկ 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 10 տարի վավերականության ժամկետով:».

2. 3-րդ մասում «Գործունակ» բառը փոխարինել «16 տարին լրացած» թվով և բառերով.

3. 5-րդ մասը «հիման վրա:» բառերից հետո լրացնել նոր նախադասությամբ. «Այս դեպքում դիմումին կցվում է այլ օրինական ներկայացուցիչ հանդիսանալու փաստը հավաստող փաստաթուղթ:».

4. 7-րդ մասը՝

1) «համաձայնությամբ» բառից առաջ լրացնել «գրավոր» բառով.

2) լրացնել նոր նախադասությամբ. «Սույն մասով նախատեսված դեպքերում դիմումներին կցվում է խնամակալ կամ հոգաբարձու հանդիսանալու փաստը հավաստող փաստաթուղթ:»:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 5-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասից հետո լրացնել նոր 2.1 մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Անձնագրում անվան և ազգանվան անգլերեն, ինչպես նաև անվան, ազգանվան և հայրանվան հայերեն ամրագրման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:».

2. 4-րդ մասի՝

1) 1-ին նախադասությունում «ցուցամատների» բառը փոխարինել «բոլոր մատների» բառերով.

2) 2-րդ նախադասությունը հանել:

3. 9-րդ մասը շարադրել **նոր** խմբագրությամբ.

«9. Անձնագիր ստանալու համար քաղաքացին ներկայացնում է՝

1) դիմում.

2) նույնականացման քարտ, իսկ 16 տարեկանը լրացած չլինելու դեպքում՝ ծննդյան վկայական: Եթե 16 տարեկանը չլրացած քաղաքացին ստացել է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագիր, ապա ծննդյան վկայականի փոխարեն ներկայացվում է անձնագիրը.

3) 16 տարեկանը լրացած չլինելու դեպքում՝ ծնողների ամուսնության, մահվան, հայրության ճանաչման վկայականները կամ միայնակ մայր լինելու վերաբերյալ տեղեկանք կամ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելու վերաբերյալ դատարանի՝ **օրինական ուժի մեջ մտած** վճիռ.

4) 18 տարեկանը լրացած չլինելու դեպքում՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ծնողների և երեխայի գրավոր **համաձայնությունները** (եթե երեխան չի ստացել նույնականացման քարտ): Եթե ծնողն անձամբ չի կարող ներկայացնել համաձայնությունը, ապա ներկայացվող համաձայնության վրա նրա ստորագրության իսկությունը պետք է վավերացված լինի նոտարական կարգով:

5) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված ինքնությունը հավաստող այլ փաստաթղթեր՝ սույն մասի 2-րդ կետով նշված փաստաթղթերը ներկայացնելու անհնարինության դեպքում (միայն օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններ և հյուպատոսական հիմնարկներ դիմած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար).

6) զինվորական կցագրման վկայական կամ զինվորական գրքույկ կամ զինվորական հաշվառման փաստը հավաստող տեղեկանք (զինապարտները).

7) պետական տուրքի վճարման անդորրագիր:».

4. 10-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1 կետով.

«3.1) Սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված դեպքերում՝ իրավասու մարմնի կողմից տրված փոփոխությունը կամ անձշտությունը հավաստող փաստաթուղթ».

5. 11-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով անձնագիր ստանալու (փոխանակելու) համար դիմող անձի լուսանկարահանումն իրականացվում և մատնադրոշմները վերցվում են իր բնակվելու (գտնվելու) վայրում՝ առանց իրավասու մարմին ներկայանալու:».

6. 14-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.

7. 15-րդ մասը շարադրել **նոր** խմբագրությամբ.

«15. Անձնագիր տրամադրելը (փոխանակելը) մերժվում է, եթե՝

1) դիմումատու չի ներկայացրել օրենքով պահանջվող փաստաթղթերը.

2) դիմումատուին հաշվառված չէ բնակչության պետական ռեգիստրում.

3) դիմումատուին ներկայացրել է ակնհայտ կեղծ փաստաթղթեր.

4) դիմումատուին չի ներկայացրել օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան կազմված փաստաթղթեր.

5) առկա է մինչև 16 տարեկան անչափահասի այն ծնողի գրավոր առարկությունը, որի մոտ օրինական հիմքերով բնակվում է երեխան.

6) դիմումատուի ներկայացրած փաստաթղթերում առկա են անճշտություններ և (կամ) հակասություններ.

7) դիմումատուին հետախուզվում է քրեորեն պատժելի արարք կատարելու համար.

8) դիմումատուի ներկայացրած փաստաթղթերում առկա են այնպիսի ջնջումներ, որոնք անձնագիր տրամադրելու (փոխանակելու) համար ունեն էական նշանակություն (անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս տարեթիվ, ծնողների վերաբերյալ տվյալներ, ծննդավայր, զինապարտին տրվող տարկետման ժամկետ և այլն) կամ ջնջումով են փաստաթղթի հիմնական վավերապայմանները (սերիա, համար, պաշտոնատար անձի ստորագրություն և այլն):».

8. 15-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15.1 և 15.2 մասեր.

«15.1. Հայաստանի Հանրապետության քաղաքացու նկատմամբ այլ պետության կողմից հետախուզում հայտարարված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տրամադրվում է (փոխանակվում է) ոստիկանության ոլորտում լիազոր պետական կառավարման մարմնի ղեկավարի (տեղակալի) որոշմամբ, եթե հետախուզում հայտարարած պետության հետ Հայաստանի Հանրապետությունը չունի Հայաստանի Հանրապետության քաղաքացուն հանձնելու մասին վավերացված միջազգային պայմանագիր, կամ նման պայմանագրի առկայության դեպքում քաղաքացու արտահանձնումը չի իրականացվել:

15.2. Սույն հոդվածի 15-րդ մասի 1-2-րդ և 4-8-րդ կետերով նախատեսված հիմքերը անձնագիրը տպագրվելուց հետո պարզվելու դեպքում տպագրված անձնագիրը չի տրամադրվում քաղաքացուն՝ մինչև նշված հիմքերի վերանալը, իսկ անձնագրի վավերականության ժամկետը լրանալու դեպքում՝ այն սույն օրենքով սահմանված կարգով ձանաչվում է անվավեր: Սույն հոդվածի 15-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքը անձնագիրը տպագրվելուց հետո պարզվելու դեպքում տպագրված անձնագիրը քաղաքացուն հանձնելու կամ անվավեր ձանաչելու հարցը լուծվում է **կեղծ փաստաթղթեր ներկայացնելու համար օրենքով սահմանված պատասխանատվության հարցը լուծվելուց հետո:**».

9. 16-րդ մասը շարադրել **նոր** խմբագրությամբ.

«16. Անձնագիրը տրամադրելիս քաղաքացուն վերադարձվում են սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 7-րդ մասերով (բացառությամբ դիմումի և գրավոր համաձայնության), սույն հոդվածի 9-րդ մասի 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը, տրամադրելը մերժելիս՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 7-րդ մասերով (բացառությամբ դիմումի), սույն հոդվածի 9-րդ մասի 2-7-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը,

փոխանակելիս՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 7-րդ մասերով (բացառությամբ դիմումի և գրավոր համաձայնության), սույն հոդվածի 10-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, փոխանակելը մերժելիս՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 7-րդ մասերով (բացառությամբ դիմումի), սույն հոդվածի 10-րդ մասի 2-4-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը: Ակնհայտ կեղծ փաստաթղթերը չեն վերադարձվում քաղաքացուն:»:

ՀՈՂՎԱԾ 4. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 7-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.

2. 1-ին մասի 8-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ և 10-րդ կետեր.

«9) տպագրված անձնագիրը չի տրամադրվել քաղաքացուն սույն օրենքով նախատեսված դեպքերում.

10) անձնագիր և նույնականացման քարտ ունեցող քաղաքացին տվյալների փոփոխության կամ անձշտության հիմքով դիմել է միայն նույնականացման քարտը փոխանակելու համար:»:

3. 3-րդ մասը շարադրել **նոր** խմբագրությամբ.

«3.Սույն հոդվածով նախատեսված դեպքերում անձնագիրը ճանաչվում է անվավեր՝ անձնագրային համակարգի ավտոմատացված համալիրի պահոցում ծրագրային ապահովմամբ համապատասխան նշում կատարելու եղանակով:»:

ՀՈՂՎԱԾ 5. Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի՝

1. 2-րդ նախադասությունում «զինկոմիսարիատը» բառից հետո լրացնել «և ուղարկում զորակոչված անձի հաշվառման վայրի անձնագրային ծառայություն:» բառերով.

2. 4-րդ նախադասությունը շարադրել **նոր** խմբագրությամբ.

«Ժամկետային զինվորական ծառայության զորակոչված անձի անձնագիրը վերադարձվում է ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելիս՝ զինկոմիսարիատում զինվորական հաշվառման կանգնելուց և զինվորական գրքույկը ներկայացնելուց հետո անմիջապես:»:

ՀՈՂՎԱԾ 6. Օրենքի 9-րդ հոդվածի՝

1. 2-րդ և 3-րդ մասերում «2014» թվերը փոխարինել «2019» թվերով.

2. 4-րդ մասից հետո լրացնել նոր 5-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի, 5-րդ հոդվածի 15-րդ մասի, 7-րդ և 8-րդ հոդվածների դրույթները տարածվում են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված՝ **անձնագիր տալու,**

փոխանակելու, անվավեր ճանաչելու, անձնագիրը վերցնելու հետ կապված հարաբերությունների վրա»:

ՀՈՂԿԱԾ 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ *1-ին հոդվածը և 3-րդ հոդվածի 2-րդ մասը` 2016 թվականի սեպտեմբերի 1-ից:*

Ա Ս Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-751-03.04.2015-ՊԻ-010/1) և «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-751¹-03.04.2015-ՊԻ-010/1) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

<i>Առաջարկության հեղինակը</i>	<i>Առարկության, առաջարկության բովանդակությունը</i>	<i>Եզրակացություն</i>	<i>Կատարված փոփոխությունները</i>
<p>Հայաստանի Հանրապետության կառավարություն (1-ին ընթերցմամբ նախագծերի քննարկման ընթացքում Նաիրա Զոհրաբյանի, Միեր Շահգեղյանի կողմից ներկայացված առաջարկություններ ի հիման վրա)</p>	<p>Առաջարկվում է օրենքում ամրագրել նույնականացման քարտ ստանալիս քաղաքացու կողմից 10 մատների մատնադրոշմները հանձնելու մասին դրույթ:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Համապատասխան բովանդակությամբ փոփոխություններ են կատարվել «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» և «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքների նախագծերում:</p>
<p>Հայաստանի Հանրապետության կառավարություն</p>	<p>1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում, ինչպես նաև «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում առաջարկվում է «2014» թիվը փոխարինել «2019» թվով՝ հնարավորություն տալով քաղաքացիներին մինչև 2019 թվականի հունվարի 1-ը ստանալ ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագրեր:</p> <p>2. Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասում, ինչպես նաև «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում «Գործունակ» բառը փոխարինել «16 տարին լրացած» բառերով՝ այդ կերպ կանոնակարգելով 16 տարին լրանալուց հետո մինչև լրիվ գործունակ (18 տարեկան) դառնալը անձնագիր կամ նույնականացման քարտ ստանալու</p>	<p>1. Ընդունվել է:</p> <p>2. Ընդունվել է:</p>	<p>1. Նախագծերում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>2. Նախագծերում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>

	<p>համար քաղաքացիների կողմից անձամբ դիմելու հարցը:</p> <p>3. «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունը առաջարկվում է շարադրել նոր՝ հետևյալ խմբագրությամբ՝ «2. Մինչև 6 տարեկան քաղաքացիներին անձնագիրը տրամադրվում է 3 տարի վավերականության ժամկետով, 6 տարեկանից մինչև 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 5 տարի վավերականության ժամկետով, բայց ոչ ավել, քան 16 տարին լրանալը, իսկ 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 10 տարի վավերականության ժամկետով:»:</p> <p>4. «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրինագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրինագծի 1-ին հոդվածի և 3-րդ հոդվածի 2-րդ մասի ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել քաղաքացիների աջ և ձախ ձեռքերի բոլոր մատների մատնադրոշմները ստանալու հնարավորություն տվող տեխնիկական համակարգի շահագործմանն անցնելու մասին Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի կողմից հայտարարությամբ հանդես գալուն հաջորդող օրը՝ հայտարարության տեքստը Հայաստանի Հանրապետության ոստիկանության պաշտոնական էլեկտրոնային կայքում հրապարակելու պահանջ սահմանելով:</p>	<p>3. Ընդունվել է:</p> <p>4. Ընդունվել է:</p>	<p>3. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>4. Օրենքների ուժի մեջ մտնելուն վերաբերող դրույթները խմբագրվել են:</p>
<p>Հայաստանի Հանրապետության կառավարություն (ՀՀ ԱԺ պետական-հրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստի ընթացքում ներկայացված</p>	<p>1. Առաջարկվում է հստակեցնել «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 6-րդ հոդվածը:</p> <p>2. Առաջարկվում է հստակեցնել «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում</p>	<p>1. Ընդունվել է:</p> <p>2. Ընդունվել է:</p>	<p>1. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>2. Նախագծերում կատարվել են համապատասխան</p>

<p><i>առաջարկություններ ի հիման վրա)</i></p>	<p>փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասով օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 10-րդ կետը և «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 10-րդ կետը:</p> <p>3. Առաջարկվում է հստակեցնել «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 8-րդ մասով լրացվող 15.2 մասի 2-րդ նախադասությունը, քանի որ բովանդակությունից պարզ չէ նշված դեպքում անձնագիրը չվերադարձնելու պայմանը:</p> <p>4. Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում «ծնողերի» բառից հետո «կամ» բառը հանել տեքստից: Առաջարկությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի պահանջով: Նույն առաջարկությունը վերաբերում է նաև «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասին:</p> <p>5. Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 5-րդ մասը խմբագրել՝ «գտնվելու վայրի» հասկացության հետ լրացնել այլ հասկացություն, օրինակ «հաշվառման վայր»:</p>	<p>3. Ընդունվել է:</p> <p>4. Ընդունվել է:</p> <p>5. Ընդունվել է:</p>	<p>փոփոխություններ:</p> <p>3. Օրենքի նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն (լրանշակված նախագծի 3-րդ հոդվածի 8-րդ մաս):</p> <p>4. Օրենքների նախագծերում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>5. Օրենքների նախագծերում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
--	---	--	---

	<p>Նույն առաջարկությունը վերաբերում է նաև «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ մասին:</p>		
--	---	--	--

ՀՀ ՈՍԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ